№ 138 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 5 **1898** ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 5 № 138

ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐԿԱՅ 1898 ԹԻԻ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

«Մշակի» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 բուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 բ., ինն և ութ ամսվանը՝ 8 բ., եօթ ամսվանը՝ 7 բ., վեց ամսվանը՝ 6 բ., հինգ ամսվանը՝ 5 բ., չորս ամսվանը՝ 4 բ., երեք ամսվանը՝ 3 բ., երկու ամսվանը՝ 2 բ., մի ամսվանը 1 բուբլի։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը (Բազարնայա և Բարօնսկայա փողոցն. անկիւն)։

Ուրիշ քաղաքներից պէտք է դիմել այս հասցէով. ТИФЛИСЪ, *редакція* «Мшакъ», *իսկ արտասահմանից՝* TIFLIS, Rédaction du journal arménien «Mschak».

Ցայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Լաւ է ուշ, քան երբէք.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Փողոցային մամուլի ֆանատիկոսութիւնը. Նամակ Դերբենդից. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմ. Նամակ Պարսկաստանից. Նամակ Ամերիկայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ծովի վրա։

ԼԱՒ Է ՈՒՇ, ՔԱՆ ԵՐԲԷՔ

—

«Մշակի» մէջ մենք հաղորդեցինք, որ Թիւրքայ „Մաշիւմաթ“ լրագիրը մի խիստ յօդուած է գրել Ռուսաստանի դէմ։ Ֆրանսիական „Temps“ լրագիրը մի յօդուածի մէջ, որ կրում է „Թիւրքիա, Եւրոպա և երրորդ աւազակ“ վերնագիրը, ասում է.

«Պետերբուրգում հրատարակվող մի ռուս լրագիր՝ Ցերգանում տեղի ունեցած ապստամբութեան առիթով, պահանջեց որ ռուսաց կառավարութիւնը խստութեամբ վարվի իր մահմետական հպատակների հետ։ Սուլթանի քարտուղար Թահիր-բէյ պատասխանեց „Մաշիւմաթ“ լրագրի մէջ, փոխադրելով Գլադստոնի այն խօսքերը՝ թէ Թիւրքիան—սկանդալ է քաղաքակրթութեան համար։ Ռուսաստանը, գրում է իր կողմից Թահիր-բէյ, կը դառնայ սկանդալ քաղաքակրթութեան համար, եթէ նա դիմէ սրին և ոյժին՝ ընդդէմ իր հպատակների Միջին Ասիայում։ Ո՞րտեղից է ոճի այս համարձակութիւնը. արդեօք մի բնորոշ ցուցմունք չէ՞ այս համարձակութիւնը այն վեհապետի ծառայի մէջ, որը քիչ ժամանակ առաջ հազիւ կարողացաւ պաշտպանել իր գոյութեան մնացորդը, ստուերը։ Բանը լրագրական պօլեմիկայով չէ վերջանում։ Ո՞րտեղից Թիւրքիան քաջութիւն ստացաւ բողոքելու Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Իտալիայի դէմ, որոնք պահանջում են վարձատրութիւն այն վնասների համար, որ կրել են իրանց հպատակները հայկական անկարգութիւնների ժամանակ։ Որպէս զի աւելի խիստ արտայայտէ իր հեգնութիւնը իր պարտատէրերի վրա, Թիւրքիան մի և նոյն ժամանակ ահագին պատուէրներ է տալիս գերմանական գործարաններին՝ թնդանօթներ, նոր տեսակի հրացաններ և ռազմամթերքներ պատրաստելու։ Ահա՛ թէ ո՛ւր է ծածկված այդ կոմեդիայի գաղտնիքը։ Փողը, որ չը կայ իսկական պարտքեր վճարելու համար, շռայլվում է բարեկամի համար, որը պիտի պաշտպանէ նրան այդ անբարեխղճութեան հետևանքներից։ Եւրոպան այնքան լաւ էր գործում, որ իր կօնցերտը դարձրեց „ծտերի խրտուիլակ“, մի այնպիսի բան, որ նոյն իսկ երեխաների ծիծաղն է յարուցանում։ Եւ այն ժամանակ երբ միաբան գործելն անօգուտ դարձաւ, իսկ քաղաքակրթված աշխարհը տեսնում էր թէ ինչպէս անպատիժ է մնում, նոյն իսկ յաղթանակ է տանում մի վեհապետ, որ մինչև այդ ատված էր Եւրոպայում,—այդ ժամանակ մի պետութիւն հեռացաւ միւսներից, ցինիզմով օգուտ քաղեց իր սեփական անբարեխղճութիւնից և լիապէս վայելեց „մեծ թիւրքի“ երախտապարտութիւնը։ Վիլհելմ II, որի հպատակներն արդէն առատ հունձ են հաւաքում պատուէրների և արդիւնաւոր տեղերի միջոցով, կը գնայ Երուսաղէմ, որպէս զի նուիրագործէ իր հովանաւորութիւնը սուլթանի հպատակների մի մասի վրա։ Իսկ Եւրոպան չը կարողացաւ ոչ մինչև վերջը տանել խստութեան քաղաքականութիւնը, ոչ էլ ժամանակին անցնել զիջողութիւնների քաղաքականութեան։“

Ֆրանսիական լրագրի այս ճիշդ նկատողութիւնը, անկասկած, Հանոտօի քաղաքականութեան դատապարտութիւնն է։ Դա դուցէ օգտակար լինէր այն ժամանակ, երբ „Temps“ լրագիրը Հանոտօի օրգանն էր։ Այժմ միայն պէտք է բացականչել. „Աւա՜ղ“։ Բայց լաւ է ուշ, քան երբէք։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՓՈՂՈՑԱՅԻՆ ՄԱՄՈՒԼԻ ՖԱՆԱՏԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ

—

Մենք կատարելապէս համակրում ենք այն անմնայ քննադատութեան, որ ռուսաց պետական մամուլի մի ազնիւ օրգան՝ «С. Петербургскія Вѣдомости» լրագիրն սկսել է նոյն մամուլի «կեղծ-հայրենասիրական» օրգաններից մէկի՝ «Свѣтъ» լրագրի և նրա խմբագիր Կոմարովի դէմ։ Ինչպէս յայտնի է, Կոմարովի այդ օրգանը, ինչպէս և նոյն կեղծ-հայրենասիրական ուղղութեան մի քանի յայտնի լրագիրներ իրանց հրապարակախօսութեան գլխաւոր նիւթը հիմնում են փողոցային ամբոխի մութ հակացողութիւնների վրա. չոչելով այդ ամբոխի ամենատգոր կրքերը և այն ձգտումները, որոնք անհետանում են ամբոխի միջից միայն կուլտուրայի որոշ զարգացմամբ, փողոցային մամուլը չէ խնայում ոչ մի սրբութիւն, զինաւորում է ազգերը ազգերի դէմ, արծարծում է ատելութիւն, թշնամութիւն մի և նոյն երկրի ազգաբնակութիւնը կազմող զանազան ցեղերի մէջ և այդ վնասակար գործունէութիւնը համարում է «հայրենասիրութիւն»։

Տարակոյս չը կայ, որ ազնիւ և չիտակ մամուլը արհամարհանքով և զզուանքով պէտք է վերաբերվի—ինչպէս շատ ճիշդ նկատում է իշխան Ուխտոմսկու օրգանը—այդ տեսակ փողոցային մամուլին և բոլորովին լռութեան տայ նրա շահատակութիւնները, բայց միայն մինչև այն ժամանակ, երբ այդ մամուլը չէ դուրս գալիս իրան վայել շրջաններից. սակայն երբ «նա իր ծաղրածուական գլխարկներով և զանգակներով կամենում է ներս մտնել և այն ասպարէզը, որ ուրիշների համար սուրբ և անձեռնմխելի է, այդ ժամանակ արդէն անկարելի է լռել»։

Եւ, ճշմարիտ, «Свѣтъ» լրագրի շահատակութիւնը այնքան անօրինակ է հանդիսանում նոյն իսկ կեղծ-հայրենասիրական և փողոցային մամուլի գործունէութեան տարեգրութեան մէջ, որ փոքր ի շատ կրթված մարդը չէ կարող չը յուզվել, չէ կարող լռել։ Այդ լրագիրը՝—պատրուակ բռնելով այն լուրը, որ գերմանական կայսրութեան կանցլեր իշխան Հոհենլոհէ ասել է Բիերբնասնին Զօլայի գործի առիթով, թէ Դրէյֆուսը անմեղ է և համեմատել է Դրէյֆուսին «Նապարէթի հրէայի» հետ,—կատաղած գրում է, թէ «Հոհենլոհէ և Բիերբնասնն» բողոքակներ են ու պատկանում են «կեղծ-քրիստոնէական» աղանդին, որը ապականիչ ազդեցութիւն ունի և քանդում է կրօնի հիմքը, այսինքն հակա-պետական տարր է հանդիսանում»։ Զը բաւականանալով այդ զզուելի խօսքերով, Կոմարով շարունակում է. «Մենք, Ռուսաստանում, նոյնպէս ունենք պետական կազմութեան այդպիսի թշնամիներ, ի դէմս բողոքական-գերմանացիների»։ Ցեղադիմութեան ասպարէզում գրանից աւելի հեռուն գնալ անկարելի է։ Մեր դարի վերջում, երբ կրօնական ազատութեան գաղափարն արդէն տարրական է դարձել, վեր կենալ և ասել, թէ բողոքականները «կեղծ-քրիստոնեաներ» են, հակապետական տարր և այդ՝ այն ժամանակ, երբ բողոքականութիւնը պետական կարգերի հիմքերի մի մասն է կազմում, ինչպէս ասում է Կոմարովի նոյն «Свѣтъ» լրագիրը, ինչպէս ասում է նոյն «Свѣтъ» լրագրի նոյն Կոմարովի նոյն «Свѣтъ» լրագրի նոյն խմբագրի նոյն «Свѣтъ» լրագրի նոյն խմբագրի նոյն «Свѣтъ» լրագրի նոյն խմբագր

կան օրէնքներով ընդունված և թույլատրված մի կրօն է և կայսրութեան միլիոնաւոր հաւատարիմ հպատակներ դաւանում են այդ կրօնը—այդ կը նշանակէ կամ խելագար լինել կամ սարսափելի ֆանատիկոս: Մեզ միանգամայն հասկանալի է այն խորին վրդովմունքը, որ ցոյց է տալիս «С. Петерб. Вѣдомости» լրագիրը, երբ ասում է. «Կօմարովը գիտէ, որ սուտ է խօսում, անարգելով օտար կրօնը, բայց նրա նպատակն է—ցեղային ատելութիւն և կրօնական անհանդուրժողութիւն մտցնել ռուսաց կեանքի մէջ, նա դիտմամբ զրդռում է Ռուսաստանի պետական օրգանիզմը... Աղբելով ամբոխի ամենակոպիտ կրքերի վրա, նա աշխատում է գրաւել նրան խաբէութեամբ և ստութեամբ և դաստիարակում է ամբոխը կոյր ատելութեամբ դէպի հակառակորդը: Կօմարովի համար ոչինչ սուրբ բան չը կայ. նա չէ յարգում օտարի հաւատը, ուրեմն նա անընդունակ է հասկանալ, թէ ինչ տեղ է բռնում հաւատը մարդու կեանքում, և վիրաւորելով օտարադաւանին, նա դրանով ցոյց է տալիս, թէ ինչ ձևական կերպով է դաւանում իր սեփական կրօնը: Կօմարովի այլանդակ վարմունքը—գարշելի ծաղր է կրօնին, մարդկանց կրօնական խղճմտանքին. այդ արդէն անամօթութեան դագաթնակէտն է»:

ՆԱՄԱԿ ԹԵՐԲԵՆԴԻՑ

Ցուլիսի 27-ին

Մենք շատ պատմութիւններ էինք լսել ու կարդացել մորեխի մասին, բայց բախտ էինք ունեցել չը տեսնելու այդ աւերիչ միջատի ահռելի բանակները: Լսել էինք նոյնպէս, որ դրանք ամպի նման կարող են արեգակի ճառագայթների առաջն առնել, օրը մթնացնել, բայց և այնպէս դժուար էր մեզ երևակայել այդպիսի սարսափելի քանակութիւն, մինչև որ ականատես չեղանք: Ցուլիսի 27-ին, կիրակի օրը, մի քանի ընկերներով գնում էինք դէպի այգիները մի պտոյտ անելու. մեր կառքը անցնում էր այգիների միջով, մէկ էլ յանկարծ հեռուում սարսափելի փոշի բարձրացաւ ու բոլորովին ծածկեց այգիների ընդարձակ տարածութիւնը: Մենք սկզբում հէնց այդպէս էլ կարծեցինք, թէ փոշի է. սակայն, որքան մեծ եղաւ մեր զարմանքը, երբ մօտենալով փոշու ամպին, համոզվեցանք, որ դա փոշի չէ, այլ մորեխ: Շարունակ 4—5 վերստ գնում էր մեր կառքը, իսկ մեր վրայից, դէպի հակառակ կողմը ընթանում էր մորեխի ամպը: Նա ընթանում էր հարաւից դէպի հիւսիս. անցնելով քաղաքի վրայից, մորեխը անցաւ դէպի Քեաֆարի կոչված լայնատարած դաշտը, որտեղ գտնվում են դերբենդցիների ու շրջակայ գիւղերի ցանքսերը: Բարեբախտաբար արտերն արդէն հասել են, շատ տեղերում նոյն իսկ քաղել վերջացրել են, այնպէս որ այս անգամ մորեխը գուցէ ոչ մի վնաս չը պատճառի, բայց միևնոյնվել դրանով ու անտարբեր մնալ կործանիչ միջատի երևալուն, միանգամայն վրդովեցուցիչ է: Լաւ կը լինի, եթէ նա չուտ հեռանայ մեր կողմերից, իսկ եթէ մնաց մի քանի ժամանակ, անպատճառ նա ձու կը դնէ մեր դաշտերում. ձուերը ամբողջ ձմեռը կը մնան հողի մէջ, իսկ գարնանը նրանցից դուրս կը գան նորերը, մեր այգիների համար նոր թշնամիներ: Պէտք է ուրեմն ենթադրել, որ գալ տարի գարնանը ևս կարող ենք մեզ մօտ հիւր ունենալ այդ կատաղի թշնամուն, իսկ գարնանը նա կարող է սարսափելի աւերումներ առաջ բերել՝ մեր արտերը բոլորը զոհ կը գնան դրանց ու խեղճ գիւղացին այս տարվայ սովից յետոյ դրժբախտութիւն կունենայ երկրորդ անգամ զրկվել իր ունեցած-չունեցածից: Տեղական իշխանութեան պարտականութիւնն է արձանագրել մորեխից վարակված բոլոր տեղերն ու ամենայն միջոց գործ դնել չարիքի առաջ առնելու համար:

Կ. Ղազարեանց

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, օգոստոսի 1-ին

Պարտք եմ համարում, լոկ ի սէր պատմական ճշմարտութեան, ցոյց տալ թէ ինչ կոպիտ սխալների վրա է հիմնել պ. Ռ. Խ. իր Նամակը, որ տպվեց «Մշակի» № 133-ի մէջ:

«Սրանից մի քանի տարի առաջ—ասում է նա—մեր առաջադիմական կուսակցութիւնը, ղեկավարվելով մի քանի սխալ հաշիւներով և մոռանալով այն հիմնական վիհը, որ բաժանում է իրան հոգևորական դասակարգից, իր ամբողջ ոյժերով մի յայտնի ընտրողական պայքարի մէջ մտաւ: Պարտը, անշուշտ, աչքի առաջ ունի 1892-ի կաթողիկոսական ընտրութիւնը. այդպէս խօսելով, նա ուզում է հասկացնել, թէ առաջադիմականները այդ տարի չեղվեցին իրանց ուղղութիւնից, մի պատահական սխալ գործեցին: Բոլորովին անհիմն փաստաբանութիւն: «Մշակի» կուսակցութիւնը հաւասար եռանդով մասնակցում էր և 1884-ի ընտրութեան, պիտի մասնակցէր և 1885-ի ընտրութեան, եթէ այդ ժամանակ «Մշակը» դադարած չը լինէր: Ոչ մի կասկած չը կայ, որ եթէ 1884-ից առաջ էլ ընտրութեան հարց լինէր, «Մշակը» չէր ծալի ձեռքերը և լուռ չէր մնայ, որովհետև նա երբէք անտես չէ արել եկեղեցու պէս մի կարևոր հիմնարկութիւն: 1892-ի պայքարը պատահական սխալի արդիւնք չէր, այլ բնական հետևանք այն ծրագրի, որին քսան տարի ծառայեց «Մշակի» ղեկավարը: Հայոց եկեղեցին այդ ծրագրի մէջ միշտ նշանաւոր տեղ է բռնել: Գրիգոր Արծրունին այն թուլամորթներից չէր, որոնք աչք են փակում խոչընդոտների առաջ, որպէս զի չը կռվեն նրանց դէմ: Դա հակառակ կը լինէր մի շիտակ, գաղափարական մարտնչողի բնաւորութեան: «Հիմնական վիհի» ծայրից նա կռվում էր ոչ թէ այն պատճառով, որ հաւատում էր թէ «արտաքոյ Հայաստանեայց եկեղեցւոյ չկը հայութիւն»—մի ֆորմուլա, որ այժմ ծիծաղ է պատճառում իր վաղեմի մղեռանդ պաշտպաններին անգամ,—այլ ի սէր այն պարզ ճշմարտութեան, որ առաջադիմական շարժումը պիտի գրկէ ժողովրդական կեանքի բոլոր կողմերը: Նա գիտէր, որ անխուսափելի է այդ կռիւը, մի օրէնք, որ հաւասարապէս պարտաւորական է բոլոր այն ազգերի համար, որոնք խաւարից դէպի լոյս են գնում: Նա գիտէր, որ մի ժողովրդի քաղաքակրթութեան հետևանքը պիտի լինի բարեփոխված եկեղեցին և այդ պատճառով պահանջում էր ըէֆօրմներ: Դա «Մշակի» ժողովրդականացրած մտքերից մէկն է, որ այսօր այլ ևս «ազգակործան» չէ համարվում, այլ հաստատ հիմք է բռնել մեր մէջ: Տեղը չէ բացատրել այդ նշանաւոր գործի բոլոր հանգամանքները: Եթէ այսօր մեղանում գոյութիւն ունի կրօնական հայեացք, եթէ ամեն մէկը պարզ գիտէ թէ ինչ պահանջի տէր է ինքը, դա երկնքից ընկած մի բարերարութիւն չէ, այլ երկար տարիների յամառ կռուի հետևանք: Բայց պ. Ռ. Խ. ուրանում է այդ բոլորը և եղած ջանքերն անուանում է «բազում աշխատեցաւ և ոչինչ կալաւ»: Ի՞նչ է դա—մեթիստոֆէլեան հեգնութիւն, թէ մի մեծ թիւրիմացութեան արդիւնք: Մենք ուզում ենք վերջինը տեսնել պարոնի այդ լալկան խօսքերի մէջ: Չէ՞ որ այժմ այդպիսի հեշտութեամբ դատապարտվող դէպքերը երէկ, անցեալ օրը տեղի ունեցան և ոչ թէ դարեր առաջ: Դուք չուտ, չափազանց չուտ մոռացաք, թէ որպիսի ոգևորիչ, կրթական նշանակութիւն ունեցաւ այդ, ձեր կարծիքով, սխալ և ապարդիւն պայքարը մեր հասարակութեան համար: Միթէ կարելի է ուրանալ, որ գիտակցութեան, ինքնաճանաչութեան սերմեր տարածելու համար չէր կարելի աւելի դեղեցիկ, աւելի համոզիչ միջոց գտնել: Ճշմարիտ, մենք ամաչում ենք մի առ մի վերանորոգել անցածի յիշատակները. դրանք այժմ էլ կենդանի են մեր մէջ. կռիւը, որ նոյն իսկ մեր դաւառական խուլ անկիւններում մղվում էր բոլոր առհասարակ պահպանողական, քարացնող տարրերի դէմ, պողպատ ու կայծ ստացաւ այդ պայքարի ժամանակ: Եւ դուք ուրանում էք այդ...

Դուք հարցնում էք. «Միթէ Մշակի» կուսակցութեան կողմից մի մոլորութիւն չէ յոյս ու ապաւէն դնել մի այնպիսի դասակարգի վրա, որը, ինչ էլ լինի, չէ կարող ամենաթմբուկ պահպանողական տարր լինելուց դադարել»: Այստեղ դուք դարձեալ աղճատում էք «Մշակի» միտքը, ձգտումները: «Մշակը» երբէք յոյս ու ապաւէն չէ դրել այդ դասակարգի վրա, ընդհակառակն, միշտ հալածել է նրան. կղերը միշտ մեղադրվողի դերում էր նրա առաջ: Ի՞նչ էին պահանջում կղերից:—Պահպանել ժողովրդական եկեղեցու ոգին, այսինքն ազատ և լայն ընտրողական իրաւունք տալ ժողովրդին, հալատակվել սրա չահերին, ծառայել այն մասսային, որ շատ հնուց ընտրելու և արձակելու իրաւունք ունի: Ժողովուրդը հասկացաւ այս պահանջները—միայն այդ ճանապարհով կարելի էր առաջ տանել կռիւը: Կղերը իր դէմ ունէր ոչ միայն կուսակցութիւնը, այլ և ժողովուրդը. նա, բնականաբար, պիտի պաշտպանվէր. նա զէնքեր ձեռք բերեց, ամփոփվելով կաստային առանձնութեան մէջ և սկսեց խլել ժողովրդի իրաւունքները՝ փոխանակ նրանց լայնացնելու: Մրցութիւնը սաստկացաւ, առաջ բերելով մի խոշոր անտագօնիզմ ժողովրդի և հոգևորականութեան մէջ: Եւ ահա այդ իսկ ժամանակ, երբ մրցութիւնը սուր կերպարանք է ընդունում, այն իսկ բանակում, որ ժողովրդի կողմն էր պաշտպանում, լսվեցին «բազում աշխատեցաք և ոչինչ կալաք» աղաղակները: Թուլամորթութեան, լքման ակնյայտնի, պարզ նշաններ: Պէտք է տեղի տալ, պէտք է անտես անել, պէտք է թողնել որ մեռելները թաղեն իրանց մեռելներին: Ահա ձեր քաղաքութիւնը... Արծրունին այսպէս չէր ասի, մինչև իսկ եթէ յաղթվէր կռուի դաշտում. նա երբէք փախուստ չէր տայ ասպարէզից, ուր տեղի ունի ընդհարում, ուր մրցութիւնն ընդունել է այն կերպարանքը, որը միացնում է Ստամբուլը Կ. Պոլսի միւս թաղերի հետ: Երևի նորից կասկածելի լուրեր են շրջում քաղաքում, որովհետև փողոցներով շարունակ անցնում են հետևակ և ձիաւոր պահակների զինուած բազմաթիւ խմբեր: Երթևեկողների մէջ կանայք շատ քիչ են երևում: Երբեմն-երբեմն անցնում են փակ կառքեր մէջը նստած երևի այս ու այն փաշայի հարեմի զարդերը: Փակ կառքեր, որքան կամենաք, թիւրքը սիրահար է փակ կառքի. դրանով են շրջում սուլթանի և փաշաների հարեմների զարդերը, փակ կառքով է գնում նաև թիւրք հոգևորականը, ստորին զինուորականը, վաճառականը: Փակ, փակ, միտքը փակ, հոգին փակ, սիրտը փակ, ամեն բան փակ է այս ողբալի ժողովրդի, բաց է միայն ձեռքը՝ բախշիշ ընդունելու և ականջները՝ կասկածելի, սպառնական ձայն լսելու համար: Ահա վերջապէս և թիւրք կանայք, երեք հոգի են, ոտքով են գնում. կոլոլված են խաս չարսաւի մէջ. բայց ով զարմանք, կուլտուրան հրաշք է կատարել, նա կարողացել է մի փոքր ձևափոխել չարսաւը՝ թիւրք կնոջ պատկառանքի այդ դարաւոր ծածկոյթը: Այդ չարսաւն այլ ևս մի ամբողջ կտոր չի ներկայացնում. մէջքի մօտ նա վարպետութեամբ բաժանված է երկու մասի, այնպէս որ անուշադիր նայողը դժուարութեամբ կարող է այդ բանը նկատել. վերին մասը ծածկում է կնոջ գլուխը, ուսերը, կուրծքը և առհասարակ իրանը, իսկ ներքին մասը ծածկում է մէջքից մինչև ոտները. այսպիսով չարսաւը մի փոքր մօտեցել է եւրոպական շրջազգեստին, և կարծում ենք, որ թիւրք կնոջ կեանքի մէջ ամենամեծ փոփոխութիւնն է այդ:

Ես յաճախ լսել եմ, որ տաճկաստանցին փողոց տանում, կամ ձևացնում էր, թէ չի տեսնում:

—Փօլիս էֆէնդի, ասացի ես, քաղաք պիտի գնամ:

—Պասպօրտ ունե՞ս:

—Ունեմ, ասացի, ցոյց տալով անցագիրս. ֆրանսերէն կարդալ չը գիտէր, չը նայելով, որ ուշի ուշով դիտում էր գրերը. անունս հարցրեց, «ման» վերջաւորութիւնն անծանօթ չէր ականջին: Հասկացաւ հայ լինելս, թթուեց. փոքր ինչ մտածեց:

—Լաւ, ասաց վերջապէս դժկամակութեամբ, այժմ մօտս «մամուր» չունեմ, երբ մամուրը գայ, քեզ նրա հետ կուղարկեմ մաքսատուն. սպասիր:

Ես սպասեցի, պէտք եղաւ երկար սպասել, կրկին վար իջայ, պահանջեցի թոյլ տալ ինձ գնալ քաղաք՝ «գնելիք ունեմ» ասացի: «Մամուր չունեմ», եղաւ պատասխանը, ճաշից յետոյ ժամը 1-ն էր, երբ եկաւ մի ուրիշ փօլիս նրան փոխանակելու, ես կրկին մօտեցայ և պահանջս յայտնեցի:

—Գնանք միասին, ասաց նախկինը:

—Ո՛չ, չի կարելի, ասաց նորեկը. պասպօրտս նայելուց յետոյ, թեթև վէճ ծագեց երկսի մէջ, որը վերջացաւ նորեկի յաղթանակով. իրաւունքը սրանն էր, պաշտօնի մէջ էր մտել:

—Բրաքմանամ (թոյլ չեմ տայ), ասաց նորեկ փօլիսը և խնդիրը վերջացաւ:

Մեր շոգենաւն առաւօտից մինչև երեկոյ կանգնեց Ոսկեղջիւրի առաջ, ես անկարող եղայ այդ բոլոր ժամանակը քաղաք իջնել և ստիպված էի միայն դիտել Կ. Պոլսի փողոցային կեանքը, որ նոյնպէս պակաս հետաքրքիր չէ: Այս փողոցը, որի առաջ կանգնել է մեր շոգենաւը, գնում է ծովափով, անցնում է Ոսկեղջիւրի կամուրջով, որը միացնում է Ստամբուլը Կ. Պոլսի միւս թաղերի հետ: Երևի նորից կասկածելի լուրեր են շրջում քաղաքում, որովհետև փողոցներով շարունակ անցնում են հետևակ և ձիաւոր պահակների զինուած բազմաթիւ խմբեր: Երթևեկողների մէջ կանայք շատ քիչ են երևում: Երբեմն-երբեմն անցնում են փակ կառքեր մէջը նստած երևի այս ու այն փաշայի հարեմի զարդերը: Փակ կառքեր, որքան կամենաք, թիւրքը սիրահար է փակ կառքի. դրանով են շրջում սուլթանի և փաշաների հարեմների զարդերը, փակ կառքով է գնում նաև թիւրք հոգևորականը, ստորին զինուորականը, վաճառականը: Փակ, փակ, միտքը փակ, հոգին փակ, սիրտը փակ, ամեն բան փակ է այս ողբալի ժողովրդի, բաց է միայն ձեռքը՝ բախշիշ ընդունելու և ականջները՝ կասկածելի, սպառնական ձայն լսելու համար: Ահա վերջապէս և թիւրք կանայք, երեք հոգի են, ոտքով են գնում. կոլոլված են խաս չարսաւի մէջ. բայց ով զարմանք, կուլտուրան հրաշք է կատարել, նա կարողացել է մի փոքր ձևափոխել չարսաւը՝ թիւրք կնոջ պատկառանքի այդ դարաւոր ծածկոյթը: Այդ չարսաւն այլ ևս մի ամբողջ կտոր չի ներկայացնում. մէջքի մօտ նա վարպետութեամբ բաժանված է երկու մասի, այնպէս որ անուշադիր նայողը դժուարութեամբ կարող է այդ բանը նկատել. վերին մասը ծածկում է կնոջ գլուխը, ուսերը, կուրծքը և առհասարակ իրանը, իսկ ներքին մասը ծածկում է մէջքից մինչև ոտները. այսպիսով չարսաւը մի փոքր մօտեցել է եւրոպական շրջազգեստին, և կարծում ենք, որ թիւրք կնոջ կեանքի մէջ ամենամեծ փոփոխութիւնն է այդ:

Ես յաճախ լսել եմ, որ տաճկաստանցին փողոց դուրս է գալիս վաճառականոցի, շուկայի տեղ: Այս բանն ինձ համար բոլորովին հասկանալի դարձաւ Կ. Պոլսում: Ցիրուցան այստեղ փողոցը՝ շուկայ է նշանակում. սուր, անախորժ կանչով փողոցը լցրած վաճառողները ման են ածում փողոցում ամենատեսակ իրեր գլխի վրա դրած, վզից կախած, մէջքին կապած, ուսին դրած, ձեռքին բռնած. ջուր վաճառողները խօմ հաշիւ չունեն, կան նաև նէրգիլէ ման ածողներ. փողոցն այստեղ իսկապէս շուկայ է: Զինուորականների բազմութեան մէջ երևում են նաև մասնաւոր մարդիկ, եւրոպական տարազով գլխին ֆէս կամ եւրոպական գլխարկ, դժուար է որոշել որը որ ազգութեանն է պատկանում, հայ է, յոյն է, եւրոպացի, թէ տաճիկ: Կ. Պոլիսը իր որոշ կնիքն է դրել զանազան ազգութիւնների վրա, այստեղ երևի պօլսեցու մի որոշ տիպ է մշակվել: Ուրախ դէմք չը կայ, մռայլ, անհանգիստ են անցորդները. ասում են, որ Կ. Պոլիսը այժմ խաղաղ է, բայց հաստատ կարելի է ասել, որ աւելի սպասողական սպանիչ կացութիւն է իշխում, քան թէ խաղաղութիւն. որովհետև ամենքն էլ կարծես ճնշված են, յուսակտուր և ինչ որ տաղնապով բռնված՝ շտապում են շուտով վերջացնել գործերը և տուն ընկնել՝ սեփական յարկի տակ հանգիստ առնելու: Ամեն մէկը կարծես սպասում է, թէ հիմա որտեղից որ է մի ահեղ որոտ, մի սոսկալի ճայթիւն կը լսուի և արիւնհեղութիւն կը լինի. այս կասկածը, այս սարսափը երևի կատարեալ են դարձնում բազմաթիւ ձիաւոր և հետևակ պահակների խմբերը, որոնք անդադար անցնում են որսկան շների զգուշութեամբ. ինչու...

Չեն շտապում և անհոգ են միայն զինուորականները. նրանք իրանց ճոխ հագուստների

պաշտօնեաներ, որոնք անցան մի ծայրից միւս ծայրը, զննեցին, դիտեցին, մուժացին, հեռացան. եկան ուրիշները, ինչու, ես չը գիտեմ: Բաթումից մեզ հետ նաւ էին նստել մի քանի գաղթականներ Կ. Պոլիս իջնելու համար. եկաւ մի թիւրք պաշտօնեայ, նրանց օրտեղից գալը և անունները գրեց, ապա խոժոռ դէմքով հրամայեց նրանց հետևել իրան: Խեղճ ու կծկված գնացին նրա յետևից ողորմելի գաղթականները. կարծես կախաղան բարձրանալու էին գնում և ով գիտէ, թէ ինչ կը լինի վերջերը: Երբ մարդ տեսնում է թիւրք պաշտօնեային հայի հետ խօսելիս, նոր հասկանում է, թէ ինչ ասել է անարդ ստրկական վիճակ, և զարմանում է հայի պնդերեսութեան, նրա դիմացկանութեան վրա. այսպիսի վիճակը կարելի է կրել մի ժամ, մի օր, բայց ոչ դարերով: Ես կանխապէս զգում էի, որ ինձ թոյլ չեն տայ Կ. Պոլիս իջնել, կամ եթէ թոյլ տալու էլ լինեն, սաստիկ պիտի նեղեն, բայց և այնպէս Կ. Պոլիս մօտիկից տեսնելու ցանկութիւնն այնքան զօրեղ էր, որ ես արդէն ճանապարհին հաստատ որոշել էի անպատճառ փորձ փորձել վար իջնել քաղաք: Ճանապարհորդներն անցան նաւից, ներքևից էլ հեռացան թիւրք փօլիսները, մնաց միայն մի հոգի, հերթապահ հսկող: Ես դիտում էի սրա դէմքը, որոշելու համար, թէ արդեօք անաչառ չի անցնի քաղաք մտնելու փորձս. ինձ թվաց թէ դէմքը բարի է այնքան, ինչքան կարող է թիւրքի դէմքը բարի լինել. ահա նա մերկացրեց ոտները, իջաւ մի մակոյկի մէջ և ոտները լուանում է. ապա վերջացնելով իր գործը, հագաւ գուլպաներն ու մաշիկները և կրկին բազմեց ինքնագոհ: Ես ցած իջայ շոգենաւից և մօտեցայ նրան. նա գլուխը յենել էր սրին և ինձ չէր տեսնում, կամ ձևացնում էր, թէ չի տեսնում:

—Փօլիս էֆէնդի, ասացի ես, քաղաք պիտի գնամ:

—Պասպօրտ ունե՞ս:

—Ունեմ, ասացի, ցոյց տալով անցագիրս. ֆրանսերէն կարդալ չը գիտէր, չը նայելով, որ ուշի ուշով դիտում էր գրերը. անունս հարցրեց, «ման» վերջաւորութիւնն անծանօթ չէր ականջին: Հասկացաւ հայ լինելս, թթուեց. փոքր ինչ մտածեց:

—Լաւ, ասաց վերջապէս դժկամակութեամբ, այժմ մօտս «մամուր» չունեմ, երբ մամուրը գայ, քեզ նրա հետ կուղարկեմ մաքսատուն. սպասիր:

Ես սպասեցի, պէտք եղաւ երկար սպասել, կրկին վար իջայ, պահանջեցի թոյլ տալ ինձ գնալ քաղաք՝ «գնելիք ունեմ» ասացի: «Մամուր չունեմ», եղաւ պատասխանը, ճաշից յետոյ ժամը 1-ն էր, երբ եկաւ մի ուրիշ փօլիս նրան փոխանակելու, ես կրկին մօտեցայ և պահանջս յայտնեցի:

—Գնանք միասին, ասաց նախկինը:

—Ո՛չ, չի կարելի, ասաց նորեկը. պասպօրտս նայելուց յետոյ, թեթև վէճ ծագեց երկսի մէջ, որը վերջացաւ նորեկի յաղթանակով. իրաւունքը սրանն էր, պաշտօնի մէջ էր մտել:

—Բրաքմանամ (թոյլ չեմ տայ), ասաց նորեկ փօլիսը և խնդիրը վերջացաւ:

Մեր շոգենաւն առաւօտից մինչև երեկոյ կանգնեց Ոսկեղջիւրի առաջ, ես անկարող եղայ այդ բոլոր ժամանակը քաղաք իջնել և ստիպված էի միայն դիտել Կ. Պոլսի փողոցային կեանքը, որ նոյնպէս պակաս հետաքրքիր չէ: Այս փողոցը, որի առաջ կանգնել է մեր շոգենաւը, գնում է ծովափով, անցնում է Ոսկեղջիւրի կամուրջով, որը միացնում է Ստամբուլը Կ. Պոլսի միւս թաղերի հետ: Երևի նորից կասկածելի լուրեր են շրջում քաղաքում, որովհետև փողոցներով շարունակ անցնում են հետևակ և ձիաւոր պահակների զինուած բազմաթիւ խմբեր: Երթևեկողների մէջ կանայք շատ քիչ են երևում: Երբեմն-երբեմն անցնում են փակ կառքեր մէջը նստած երևի այս ու այն փաշայի հարեմի զարդերը: Փակ կառքեր, որքան կամենաք, թիւրքը սիրահար է փակ կառքի. դրանով են շրջում սուլթանի և փաշաների հարեմների զարդերը, փակ կառքով է գնում նաև թիւրք հոգևորականը, ստորին զինուորականը, վաճառականը: Փակ, փակ, միտքը փակ, հոգին փակ, սիրտը փակ, ամեն բան փակ է այս ողբալի ժողովրդի, բաց է միայն ձեռքը՝ բախշիշ ընդունելու և ականջները՝ կասկածելի, սպառնական ձայն լսելու համար: Ահա վերջապէս և թիւրք կանայք, երեք հոգի են, ոտքով են գնում. կոլոլված են խաս չարսաւի մէջ. բայց ով զարմանք, կուլտուրան հրաշք է կատարել, նա կարողացել է մի փոքր ձևափոխել չարսաւը՝ թիւրք կնոջ պատկառանքի այդ դարաւոր ծածկոյթը: Այդ չարսաւն այլ ևս մի ամբողջ կտոր չի ներկայացնում. մէջքի մօտ նա վարպետութեամբ բաժանված է երկու մասի, այնպէս որ անուշադիր նայողը դժուարութեամբ կարող է այդ բանը նկատել. վերին մասը ծածկում է կնոջ գլուխը, ուսերը, կուրծքը և առհասարակ իրանը, իսկ ներքին մասը ծածկում է մէջքից մինչև ոտները. այսպիսով չարսաւը մի փոքր մօտեցել է եւրոպական շրջազգեստին, և կարծում ենք, որ թիւրք կնոջ կեանքի մէջ ամենամեծ փոփոխութիւնն է այդ:

Ես յաճախ լսել եմ, որ տաճկաստանցին փողոց դուրս է գալիս վաճառականոցի, շուկայի տեղ: Այս բանն ինձ համար բոլորովին հասկանալի դարձաւ Կ. Պոլսում: Ցիրուցան այստեղ փողոցը՝ շուկայ է նշանակում. սուր, անախորժ կանչով փողոցը լցրած վաճառողները ման են ածում փողոցում ամենատեսակ իրեր գլխի վրա դրած, վզից կախած, մէջքին կապած, ուսին դրած, ձեռքին բռնած. ջուր վաճառողները խօմ հաշիւ չունեն, կան նաև նէրգիլէ ման ածողներ. փողոցն այստեղ իսկապէս շուկայ է: Զինուորականների բազմութեան մէջ երևում են նաև մասնաւոր մարդիկ, եւրոպական տարազով գլխին ֆէս կամ եւրոպական գլխարկ, դժուար է որոշել որը որ ազգութեանն է պատկանում, հայ է, յոյն է, եւրոպացի, թէ տաճիկ: Կ. Պոլիսը իր որոշ կնիքն է դրել զանազան ազգութիւնների վրա, այստեղ երևի պօլսեցու մի որոշ տիպ է մշակվել: Ուրախ դէմք չը կայ, մռայլ, անհանգիստ են անցորդները. ասում են, որ Կ. Պոլիսը այժմ խաղաղ է, բայց հաստատ կարելի է ասել, որ աւելի սպասողական սպանիչ կացութիւն է իշխում, քան թէ խաղաղութիւն. որովհետև ամենքն էլ կարծես ճնշված են, յուսակտուր և ինչ որ տաղնապով բռնված՝ շտապում են շուտով վերջացնել գործերը և տուն ընկնել՝ սեփական յարկի տակ հանգիստ առնելու: Ամեն մէկը կարծես սպասում է, թէ հիմա որտեղից որ է մի ահեղ որոտ, մի սոսկալի ճայթիւն կը լսուի և արիւնհեղութիւն կը լինի. այս կասկածը, այս սարսափը երևի կատարեալ են դարձնում բազմաթիւ ձիաւոր և հետևակ պահակների խմբերը, որոնք անդադար անցնում են որսկան շների զգուշութեամբ. ինչու...

Չեն շտապում և անհոգ են միայն զինուորականները. նրանք իրանց ճոխ հագուստների

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են, որ մի քանի օր առաջ Թիֆլիսի Յովհաննեան հայոց դպրոցի հոգաբարձութիւնը յանձնեց կառավարչական ուսումնարանների վարչութեան թէ դպրոցի շինութիւնը, գոյքը և թէ Անանովի անդին քարավանսարան ու դրամական կարողութիւնը: Քարավանսարայի կառավարութիւնն այժմ գտնվում է ժողովրդական դպրոցների տեսչի ձեռքում: Գործը դեռ չէ վերջացած:

—

Ներքին գործերի մինիստրութեան մէջ մշակվել է ֆաբրիկաների և գործարանների համար պարտադիր կանոնների մի ծրագիր, որի նպատակն է պաշտպանել բանուորների կեանքը, առողջութիւնը և բարոյականութիւնը: Ծրագիրը կենթարկվի պետական խորհրդի քննութեան:

—

Մի քանի օր անտանելի չոգ անելուց յետոյ, օգոստոսի 3-ին յորդ անձրև եկաւ Թիֆլիսում և յաջորդ օրը, օգոստոսի 4-ին քաղաքում սկսվեց շատ հով եղանակ:

—

Ինչպէս յայտնի է, կառավարութիւնը որոշել է երկու նոր պոլիտեխնիկական ինստիտուտներ բանալ Կիէվում և Վարշավայում: Այդ ինստիտուտների կանոնադրութիւնը հաստատվեց այս տարվայ յունիսի 8-ին: Ֆինանսների մինիստրութեան օրգան «Вѣстникъ Финансовъ» բացատրում է այն պատճառները, որոնք ստիպեցին կառավարութեան հիմնել այդ երկու նոր բարձր դպրոցները: Ամեն տարի բազմաթիւ երիտասարդներ, որոնք ձգտում են տեխնիկական ուսում ստանալու, գնում են արտասահման. 1897-ին Բերլինի տեխնիկական բարձր դպրոցում 124 ռուսահպատակ ուսանողներ կային, իսկ Միւլհաուզենի քիմիական դպրոցում բոլոր աշակերտների վեցերորդ մասը՝ ռուսահպատակներ են: Այդ հոսանքի առաջն առնելու համար, կառավարութիւնն ստիպվեց թէ արդէն գոյութիւն ունեցող տեխնօլոգիական և տեխնիկական դպրոցների ծաւալը մեծացնել և թէ նորերը բանալ:

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ մեզ գրում են. «Օգոստոսի 1-ին, առաւօտեան 2 ժ. 50 ր. մեզանում պատահեց երկրաշարժ, երեք զօրաւոր ցնցումներով: Շատերը դուրս վազեցին փողոց, շատերը քնած ժամանակ ցնցումից՝ անկողնից գլորվել են յատակի վրա: Ինչպէս լսեցինք, մի քանի հին շինութիւններ վնասվել են:

—

ԱԲԱՍԹՈՒՄԱՆԻՑ մեզ գրում են. «Այստեղ եղանակը աքանչելի է: Ոչ մի տարի ամարանոց եկողների թիւը այնքան գուցէ մեծ չէ եղել, որքան այս տարի: Այնու ամենայնիւ, կենսական մթերքները չեն թանգացել և ապրուստը շատ էժան է: Տարաբախտաբար ամարանոց եկողների մեծամասնութեան միակ զբաղմունքն է՝ թղթախաղը: Դիշեր ցերեկ չեն հեռանում կանաչ սեղանի առաջից: Բացի դրանից՝ թղթախաղերի շրջանում միմեանց վիրաւորելը սովորական բան է դարձել: Երէկ մի դէպք պատահեց, որ այսօր ամբողջ Աբասթումանի խօսակցութեան նիւթ է դարձել: Երկու հոգի թղթախաղներից կռվելով, այն աստիճան իրանց կորցրին, որ սկսեցին աթոռներով և ձեռնափայտերով միմեանց խփել: Ահա ձեզ մեր բարքերի մի նմուշ...»:

—

ՄԵՂՐԻ գիւղից մեզ գրում են. «Յուլիսի 21-ին, կառավարութեան կարգադրութեան համաձայն՝ մեզ մօտ եկաւ՝ պօլիցիական պրիստաւի յետ՝ Շուշու քաղաքային դպրոցի տեսուչը՝ փակված հայոց եկեղեցական-ծխական դպրոցի թէ շինութիւնը և թէ բոլոր գոյքը ստանալու: Տեսուչը արձանագրութիւն կազմեց և ցուցակով ստացաւ բոլոր իրերը, գրադարանի գրքերը և կնքելով դռները՝ ուղևորվեց Շիրվանիձոր գիւղը:»

—

ՂԶԼԱՐԻՑ հեռագրում են «Кавказъ» լրագրին, օգոստոսի 2-ից. «Ցալօվկայում այսօր բացվեց մի նոր անդին պատուվածք. Թմբկահարութիւնը իմացրեց, որ ջուրը գալիս է քաղաքի վրա: Դրութիւնն անելանելի է. օգնութիւնը դրսից անհրաժեշտ է. յուլիսի 6-ի պատուվածքը մինչև այսօր չէ փակված»:

—

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են. «Ինչպէս ամեն տեղ, այստեղ էլ Թիֆլիսի նահանգի ժողովրդական դպրոցների տեսուչ՝ Պավլով, պօլիցիայի և գործակալի ներկայութեամբ, ցուցակագրելով հայոց ուսումնարանի բոլոր գոյքը, իր ձեռքն առաւ: Այստեղից Պավլով գնաց՝ Լագօդախ, Վելիսցիխէ և Ցարսկօէ-Կոլօդցի՝ նոյն նպատակով»:

—

ՄՕԶԴՕԿԻՑ մեզ գրում են. «Յուլիսի 26-ին, մեր քաղաքացիները իրանց հրաժեշտը տուեցին հասարակութիւնից յարգված Գէորգ քահանայ Զաքարեանին: Քաղաքից դուրս՝ պատրաստված էր հացկերոյթ ի պատիւ Զաքարեան քահանայի: Գէորգ քահանան Եկատերինօդարից ժամանակաւորապէս փոխադրվելով այստեղ, բարեխղճութեամբ կատարեց այն, ինչ որ պահանջվում է քահանայից: Այո, մի տարվայ ընթացքում նա մեծ սէր ու համակրութիւն ձեռք բերեց Մօզդոկի հասարակութեան մէջ: Գէորգ քահանան, իր ցանկութեամբ, փոխադրվում է Անդրկասպեան քաղաքներից մէկը, ուր նրա համար աւելի ընդարձակ գործելու ասպարէզ է բացվում: Ցանկանում ենք, որ նոյն համակրութիւնը ձեռք բերի և այնտեղ»:

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ մեզ գրում են. «Մեզանում շոքեր են: Անձրևը շատ սակաւ է: Ահա երկու ամիս է, որ հավիւ 1—2 անգամ անձրև է եկել, այն էլ շատ քիչ: Չը նայած դրան՝ գարնանային անձրևները միանգամայն նպաստեցին մեր բուսականութեանը, մանաւանդ հացահատիկներին, որ համեմատելով նախընթաց տարիների հետ, բաւական առատ է: Հունձն արդէն վերջացել է: Ծառապտուղների բերքը ձմրան ցրտերի պատճառով սակաւ է. դեռ նոր են սկսել քաղել ամառային ծառապտուղները: Կենսական մթերքները համեմատաբար թանգ են»:

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Մեր գաւառի Դիվիչու մահալում տարածված է ծաղիկ հիւանդութիւնը: Բագուի բժիշկ Սէմէնով եկել է այդ առիթով Ղուբա և շրջում է գաւառը հետազօտելու համար, թէ քանի գիւղերի մէջ է տարածված հիւանդութիւնը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄ

—

Պատերազմական բեմից ստացվում են վերջին տեղեկութիւնները: Սանտ-Եագօի բանակում գտնվող ամերիկական գեներալները մի հանրագիր մատուցին գեներալ Շաֆտէրին, որով պահանջում են անյապաղ հեռացնել ամերիկական զօրքը Կուբայից, որովհետև ճահճային տենդը տարածվել է զինվորների մէջ և թուլացնում է նրանց: Արշաւանք գործել դէպի կղզու ներսը այժմ, երբ սկսվել են պարբերական անձրևները, անհնարին է և նշանակում է կորուստի մատնել ամբողջ զօրքը: Դեղին տենդն էլ կարող է հասնել ճարակի կերպարանք ընդունել և այն ժամանակ աւերումները աւելի սարսափելի կը լինեն: Դեներալները իրանց այդ պահանջը հիմնում են տեղացի հեղինակաւոր բժիշկների վկայութեան վրա և դրականապէս ասում են, որ ով հակառակ լինի զօրքերի հեռացնելուն Կուբայից, նա պատասխանատու կը լինի հազարաւոր մահերի համար:

Սանտ-Եագօի անձնատուր լինելուց յետոյ ամերիկացիների ձեռքն անցան մի շարք ամրութիւններ Կուբայի արևելեան մասում: Սպանիական բերդապահ զօրքերը միմեանց ետևից անձնատուր էին լինում գլխաւորապէս ուտեստի պակասութեան պատճառով: Իսկ գեներալ Բլանկօ Հավանայում աշխատում է պերճախօս ճառերով ոգևորել ազգաբնակութիւնը: Պօրտօ-Ռիկոյում, չը նայած որ հաշտութեան բանակցութիւններ էին սկսված, շարունակվում էին պատերազմական գործողութիւնները և մի քանի լրագրների ասելով Սան-Ժուանի ռմբակոծութիւնն սկսված էր: Ֆիլիպինեան կղզիներում էլ սպանիացիների դրութիւնը յուսահատական էր: Մանիլան չէր կարող դիմանալ նոյն իսկ մի թեթև ռմբակոծութեան. Ագվինալդոի հրոսակները շրջապատել էին նրան և համարեա ամեն օր կռիւ էին վարում բերդապահ զօրքի դէմ: Ինչպէս յայտնի է, այժմ բոլոր պատերազմական գործողութիւնները դադարեցրած են:

Այժմ, երբ Կուբան այլ ևս Սպանիային չէ պատկանում, սպանիական լրագրները պահանջում են որ Հավանայից Սպանիա տեղափոխվի Քրիստաֆոր Կոլումբոսի աճիւնը: Սպանիացիները կարծում են թէ եանքիները կը պղծեն այդ մեծ մարդու գերեզմանը և կը չանարգեն նրա ոսկրները, տանելով նրանց զանազան տեղեր ցոյց տալու համար: Դա, իհարկէ, յաղթվածների կողմից լոկ զրպարտութիւն է ամերիկացիների դէմ, որոնք պատերազմի ժամանակ ցոյց տուին վեհանձնութիւն, ասպետական բնաւորութիւն: Ցամենայն դէպս, եթէ սպանիական հայրենասէրների այդ տենչանքը կատարվի, հռչակաւոր ծովագնացի ոսկորները հինգերորդ անգամ տեղահան կը լինեն: Կոլումբոս մեռաւ 1506 թվին և թաղվեց Վալիատոլիտում: Երեք տարուց յետոյ նրան տեղափոխեցին Սեվիլիայի վանքը, իսկ 1536 թվին տարան Սան-Դոմինգո կղզին, ուր Կոլումբոս ինքն էր կամեցել թաղվել: Երբ սպանիացիները 1795 թվին այդ կղզու մի մասը տուին Ֆրանսիային, Կոլումբոսի աճիւնը տեղափոխեցին Հավանա և թաղեցին մայր եկեղեցում:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, յուլիսի 26-ին

Յուլիսի 23-ին, առաւօտեան ժամը 11-ին, Թաւրիզ հասան Ատրպատականի նոր առաջնորդ նորընծայ Սահակ եպիսկոպոս Այվազեան, Սպահանի առաջնորդ Մաղաքիա եպիսկոպոս Տէրտէրեանի հետ միասին: Ընդունելութիւնը և մուտքը տեղի ունեցաւ սովորական շուքով: Երկրագրի հոգաբարձութիւնները վաղօրօք վարձել էին քաղաքից դուրս մի այգի, ուր իջևանեցին երկու առաջնորդները: Նորեկ հիւրերը և դիմաւորող հայ հասարակութիւնը պատշաճաւոր մեծարանք ստացան հոգաբարձութիւնների պատրաստած տեղանից: Հայ հասարակութեան բազմութիւնն աւելի մեծ կը լինէր, եթէ փոխանորդ քահանայի սիալ յայտարարութիւնը չը լինէր: Քաղաքից դուրս, 1½ ժամ հեռաւորութեան վրա, ուղարկել էին պահեստի ձի (եէդէկ) և կառք իրանց ներկայացուցիչների հետ՝ Թագաժառանգը, Ամիր-Նիզամը, Քեարգիւզարը, Ոստիկանապետը, Ատրպատականի ընդհանուր մաքսերի տնօրէն Միւրասիրը Սալթանէն և ուրիշները. իսկ օտար ներկայացուցիչներից կառք և պահեստի ձի ուղարկել էին անգլիացոց, ֆրանսիացոց և թիւրքաց հիւպատոսները: Կառավարութենից կարգված ֆարաշները և մանաւանդ Միւրասիրը Սալթանէի ձիաւորները շատ լաւ էին պահպանում կարգը: Միւրասիրը Սալթանէի փառաւոր կառքով մտան Թաւրիզ երկու առաջնորդները: Մաքսերի հայասէր տնօրէնը ուղարկել էր ընդառաջ բացի իր սուիտայից նաև մաքսատան բոլոր հայ պաշտօնեաներին, իսկ իբր ներկայացուցիչ՝ Թաւրիզի մաքսի վերաքննիչ պ. Մկրտիչ Երամեանցին: Հոգաբարձութիւնների մարմիններից՝ անյայտ պատճառներով՝ բացակայ էին Ղալայի հոգաբարձութեան ատենապետ Սարգիս Յովհաննէսից և դանձապահ

վրա կարծես հլացած երբեմն երբեմն վերէն վար նայում են իրանց և սուրը շրրխկացնելով անցնում են հանդարտ, ինքնագոհ, միշտ ժպիտը շրթունքին պատրաստ. կան որ սլանում են կառքերով, կամ գեկեցիկ նժոյգների վրա նստած. վերջին դէպքում թիւրք զինուորականն իրան զգում է ամպերի մէջ, մանաւանդ որ սրանց ձիերը անմահանքայուածք ունեն:

Լրագիր կարդացող չը կայ, երկու անգամ լրագիր վաճառող անցաւ, հայ լրագիր հարցրի, վաճառողն զարմացմամբ ինձ նայեց և անցաւ. պահանջը խիստ տարօրինակ էր...

Նաւի վրա յայտնվեց մի թիւրք երիտասարդ սպայ: Տեսնելով՝ որ ես ուշադրութեամբ դիտում եմ քաղաքը, նա մօտեցաւ ինձ և բարև տուեց. խօսակցութիւն սկսելու ակնյայտնի ցանկութիւն ունէր: Ես սիրով ընդունեցի նրա համբարեւը:

—Գեղեցիկ է Կ. Պոլիսը, էֆէնդի, հարցրեց նա:

—Այո, գեղեցիկ է:

—Շատ գեղեցիկ է, էֆէնդի, աւելացրեց նա, այսպիսի քաղաք Եւրոպայում չը կայ: Տեսնում ես, սա Այա-Սոֆիան է, սա Սէրալն է, սա զինուորական մինիստրութեան պալատն է. Իլդիզ-Քիոսքը և Բոյիքդէրէի պալատները տեսար:

—Այո, տեսայ. բոլորն էլ գեղեցիկ են, բայց ինչպէս է ընակիչների դրութիւնը. խաղաղ է քաղաքը:

—Օ՜, շատ խաղաղ է, պատասխանեց ժպտալով. չը լինի թէ ձեր երկրի լրագրները գրում են, թէ խռովութիւն կայ այստեղ, մի հաւատացէք, էֆէնդի, սուտ են գրում:

—Ուրեմն Կ. Պոլսում և Հայաստանում ջարդեր չեն եղել, սուտ գրեցին լրագրները:

—Ջարդեր. չէ, ինչ ջարդ, հայերը մի քիչ անկարգութիւն արին, թիւրքերին նեղութիւն տուին, կռիւ եղաւ, իրար ջարդեցին. այ հէնց Կ. Պոլսում 1000 հայ մեռաւ 400 թիւրք: Տեսնում ես, որ թիւրքերն էլ են կոտորվել:

—Բայց մենք գիտենք, որ այստեղ դուք 4000 հայ էք կոտորել. իսկ գաւառներում հաշվել անգամ դժուար է. ձեր կառավարութիւնը մի տարօրինակ կառավարութիւն է. քաղաքներում դուք էք կոտորում, գաւառները քրդերին էք յանձնել:

—Ո՛չ ոչ, հայերի վիճակն այստեղ շատ լաւ է, էֆէնդի. իրանք են անհանգիստ. գիտես, Զէյթունում 400 զինուոր մի օրում կոտորեցին. ախր ինչ են ուզում մեզանից հայերը:

—Հայերը բան չեն ուզում բացի հանգիստ, խաղաղ ապրուստից. դու այն ասա, դուք ինչ էք ուզում հայերից, ինչու՞ չէք թողնում նրանք հանգիստ ապրեն:

—Այ կը տեսնես, այսուհետև հայերն ու թիւրքերը եղբօր պէս կապրեն: Գաղթականները բոլորը գալիս են, մենք ընդունում ենք, նրանք լաւ կը լինեն:

—Նրանք երբէք լաւ չեն լինի, քանի դուք այսպէս կը կառավարէք երկիրը:

—Դուք ո՞րտեղացի էք, էֆէնդի:

—Ես ռուսաստանցի հայ եմ:

—Մնաք բարով, ասաց թուրք սպան ու հեռացաւ:

—

Ով ուզում է իսկապէս տեսնել Բոսֆորն իր բոլոր գեղեցկութեան մէջ և վայելել աշխարհի այդ չքնաղ կտորի գեղեցկութեան հաճոյքը, նա պիտի աշխատի տեսնել Բոսֆորը մի լուսնկայ գիշեր նաւի վրայից: Այդ բախտը վիճակվեց ինձ: Մութն ընկաւ. մեր նաւը մի փոքր հեռացաւ նաւամատոյցից և կանգ առաւ ասիական ափի առաջ. կէս գիշերին այնտեղից պիտի մեկնէր դէպի Իզմիրի (Նիկոմիդիոյ) ծոցը: Լրանալու մօտիկ լուսինը փայլեց երկնքում. ջրերը խաղաղ էին, այնքան խաղաղ, որ մարդ մի բոպէ մոռանում էր, թէ ոտների տակ ծով է փռված: Քաղաքը լռեց. ինչ շատ է քնում այդ միլիոնաւոր բազմութիւնը: Քնում է արդեօք, թէ ամեն մէկը մի անկիւնում կուչ է գալիս: Կ. Պոլսում գիշերային կեանք չը կայ, երևի մութն իջնելուն պէս ամեն մարդ շտապում է տուն. անվտանգ չէ լուսով չրջել, ուր մնաց թէ խաւարի մէջ. շներն էլ լուռ են: Բլուրներն այժմ հրաշալի տպաւորութիւն են գործում իրանց անհամար ճրագներով, որոնք անդրադառնում են ափերի ջրերի մէջ. լուսինն էլ վերևից իր պաղ ճառագայթների խուրձերով ողողել է ջրի մակերևոյթը. երևում են մանրիկ դողդողուն ալիքներ, որոնք ձայն չեն հանում, այլ ասես թէ փսփսում են փայլելով ինչպէս յակինթներ, և այս բոլորի վրա խորհրդաւոր ձևով թարթում է իր մի հատիկ աչքը՝ ծովափի փարոսը: Անհ մի շոգենաւ. նա գալիս է Դարդանելի կողմից, պայմանական գոյնզգոյն ճրագները վառած, գալիս է ուղիղ մեզ վրա. չի ընդհարուի արդեօք: Երէկ ճիշտ այս պահուն երկու նաւեր են ընդհարուել: Անհ նա մօտեցաւ, ջրերի աղմուկը մեծացաւ, այս բոպէիս սա միակ ձայնն է բոլոր շրջակայքում, բայց անցաւ, յետևից մի երկար փայլուն գիծ թողնելով, ուր ջրերը մի առ ժամանակ լուրթից խռոված պէս խոյս են տալիս մէկկողմից, շարժվում են, գնում են այս ու այն կողմեր և ապա փոշմանածի պէս յետ դառնում և կրկին եղբայրաբար զրվում, քուն մտնում, խաղաղ ծովային քուն: Դարձեալ լռութիւն տիրեց. ոչ մի ձայն, բացի ալեակների մեղմ, չատ մեղմ ջում են որ Հավանայից Սպանիա տեղափոխվի Քրիստաֆոր Կոլումբոսի աճիւնը: Սպանիացիները կարծում են թէ եանքիները կը պղծեն այդ մեծ մարդու գերեզմանը և կը չանարգեն նրա ոսկրները, տանելով նրանց զանազան տեղեր ցոյց տալու համար: Դա, իհարկէ, յաղթվածների կողմից լոկ զրպարտութիւն է ամերիկացիների դէմ, որոնք պատերազմի ժամանակ ցոյց տուին վեհանձնութիւն, ասպետական բնաւորութիւն: Ցամենայն դէպս, եթէ սպանիական հայրենասէրների այդ տենչանքը կատարվի, հռչակաւոր ծովագնացի ոսկորները հինգերորդ անգամ տեղահան կը լինեն: Կոլումբոս մեռաւ 1506 թվին և թաղվեց Վալիատոլիտում: Երեք տարուց յետոյ նրան տեղափոխեցին Սեվիլիայի վանքը, իսկ 1536 թվին տարան Սան-Դոմինգո կղզին, ուր Կոլումբոս ինքն էր կամեցել թաղվել: Երբ սպանիացիները 1795 թվին այդ կղզու մի մասը տուին Ֆրանսիային, Կոլումբոսի աճիւնը տեղափոխեցին Հավանա և թաղեցին մայր եկեղեցում:

—

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, յուլիսի 26-ին

Յուլիսի 23-ին, առաւօտեան ժամը 11-ին, Թաւրիզ հասան Ատրպատականի նոր առաջնորդ նորընծայ Սահակ եպիսկոպոս Այվազեան, Սպահանի առաջնորդ Մաղաքիա եպիսկոպոս Տէրտէրեանի հետ միասին: Ընդունելութիւնը և մուտքը տեղի ունեցաւ սովորական շուքով: Երկրագրի հոգաբարձութիւնները վաղօրօք վարձել էին քաղաքից դուրս մի այգի, ուր իջևանեցին երկու առաջնորդները: Նորեկ հիւրերը և դիմաւորող հայ հասարակութիւնը պատշաճաւոր մեծարանք ստացան հոգաբարձութիւնների պատրաստած տեղանից: Հայ հասարակութեան բազմութիւնն աւելի մեծ կը լինէր, եթէ փոխանորդ քահանայի սիալ յայտարարութիւնը չը լինէր: Քաղաքից դուրս, 1½ ժամ հեռաւորութեան վրա, ուղարկել էին պահեստի ձի (եէդէկ) և կառք իրանց ներկայացուցիչների հետ՝ Թագաժառանգը, Ամիր-Նիզամը, Քեարգիւզարը, Ոստիկանապետը, Ատրպատականի ընդհանուր մաքսերի տնօրէն Միւրասիրը Սալթանէն և ուրիշները. իսկ օտար ներկայացուցիչներից կառք և պահեստի ձի ուղարկել էին անգլիացոց, ֆրանսիացոց և թիւրքաց հիւպատոսները: Կառավարութենից կարգված ֆարաշները և մանաւանդ Միւրասիրը Սալթանէի ձիաւորները շատ լաւ էին պահպանում կարգը: Միւրասիրը Սալթանէի փառաւոր կառքով մտան Թաւրիզ երկու առաջնորդները: Մաքսերի հայասէր տնօրէնը ուղարկել էր ընդառաջ բացի իր սուիտայից նաև մաքսատան բոլոր հայ պաշտօնեաներին, իսկ իբր ներկայացուցիչ՝ Թաւրիզի մաքսի վերաքննիչ պ. Մկրտիչ Երամեանցին: Հոգաբարձութիւնների մարմիններից՝ անյայտ պատճառներով՝ բացակայ էին Ղալայի հոգաբարձութեան ատենապետ Սարգիս Յովհաննէսից և դանձապահ

փսփսուկը: Անհ մի նաւակ հանդարտ լողում է մեր նաւի առաջից, ասիական ափից դէպի եւրոպականն է դիմում: Հազիւ է լսվում թիակների շրփոցը և ամեն անգամ, երբ թիավարները բարձրացնում են թիերը, ջրի խառնվածքը լուսաւորվում է աւելի պայծառ, փայլում են ալիքները. նաւակը հազիւ հաղ ծրագրվում է, նրա մէջ պլպլում է ծիրանագոյն դողդոջուն կրակ: Կարծես երկնքից ընկած մի աստղ է այն, որ լողում է ջրերի երեսին. մարդ մի բոպէ մոռանում է ամեն ինչ, և՛ այս նաւակը, և՛ նրա թիակների ձայնը, և՛ լուսինը, և՛ մանրիկ ալիքները, բոլորը, բոլորը մոռացվում են, կարծէք թէ բոլորը երազ է: Բայց նաւակի միջից լսվում են ձայներ, ականջ եմ դնում. թիւրքերէն է, և այս գիտակցութիւնը բաւական է, որ դիւթական տեսարանի գրաւչութիւնը փչանայ: Ես անհանգստութեամբ հետևում եմ նաւակին, որ շուտ կորչի իր անտանելի թիւրքերով, որովհետև թիւրք և բնութեան գեղեցկութիւն, երկու անհաշտ գաղափարներ են, ամներդաշնակ, իրար խանգարող: Նաւակն անցաւ, ձայները լռեցին, ես փորձում եմ կրկին անձնատուր լինել իմ նախկին մտքերին, բայց ի զուր, նաւակն ամեն բան փչացրեց: Ես յիշում եմ այժմ այն զարհուրելի ջարդերը. յիշում եմ գիշերային եղեռնագործութիւնները, զգում եմ, որ ճիշտ այս պահուն, ճիշտ այդպիսի նաւակներով արիւնոտ զոհերի դիակներ են թափվել այս ջրերի մէջ, իսկ աքսորի անունով քանիներն են կենդանի-կենդանի իջել այս խաղաղ, այս գեղեցիկ ալիքների տակ:... Եւ լուսինը դարձեալ լուսաւորել է:

Ա. Անարոնեան

Գ. Մելիք-Ազարեանց։ Նորընտիր առաջնորդը իջաւ եկեղեցի և տուեց իր օրհնութիւնն ու ողջոյնը խուռն հասարակութեան։ Այսօր, կիրակի, եկեղեցու բեմից կարդացվեց կաթողիկոսի կոնդակը, որից յետոյ Սահակ եպիսկոպոսը խօսեց քարոզ և բացատրեց ժողովրդի և առաջնորդի փոխադարձ պարտականութիւնները և համեստաշէն գործունէութեան տուած արդիւնքը։ Սահակ եպիսկոպոսը ամենամեծ կարևորութիւն է տալիս կրթական գործին, ուստի և սպասելի է, որ նա հաստատ մնայ իր սիրած գործի վրա և վերանորոգէ իր նախորդների քանդածը։

W.

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՑԻՑ

—

Բօստօն, յուլիսի 26-ին

Շաբթուս մէջ խաղաղութեան մասին մի քանի անգամ զրոյցներ շրջեցան, սակայն իրաց վիճակը քննողները դեռ բաւական հեռու կը գտնեն պատերազմի վախճանը։ Սպանիոյ ծովերքը ռմբակոծելու ծրագրին վրա լռութիւն կը պահվի. կը կարծեն թէ նախագահը ետ կեցաւ իր այս դիտաւորութենէն՝ միջազգային բարդութիւններէ վախնալով։ Ամերիկեան մամլոյ մէջ բաւական ծանր ակնարկութիւններ կան Գերմանիայ կայսեր մասին, որոյ ընթացքը եանքիներու ջիղերը կը ցնցէ։ Վիլհէլմ կայսեր Սբ. Երկիր ուխտագնացութիւնը մանաւանդ հոս զուարճութեան և սրախօսութեան հարուստ նիւթ կը մատակարարէ։ Վաճառականներու բաւական ազդեցիկ դաս մը կը ջանայ համոզել կառավարութիւնը Ֆիլիպինեան կղզիները պահելու, միւս կողմէն ալ ոչ նուազ ազդեցիկ մարդիկ խստիւ կը դատապարտեն այդ միտքը։ Բայց թէ ինչ կը խորհի վարչապետը, ոչ ոք գիտէ, միայն թէ իր ընթացքով կրկին այնքան վստահութիւն ներշնչեց, որ ամեն քաղաքացի կրնայ հանգիստ քնանալ, գիտնալով թէ ձերմակ տանը մէկը կայ, որ այնքան կը հոգէ հանրապետութեան շահերուն վրա։

Քուպացի հայրենասէրներու և ամերիկացի պաշտօնեաներու մէջ ցրտութիւն մը յառաջ եկաւ, որ կրնար ծանր դժուարութիւններ պատճառել երկու կողման համար։ Նախագահը յայտարարեց, թէ Սանթ-Եագոյի այն սպանիացի քաղաքային պաշտօնեաները, որ կընդունեն Միացեալ-Նահանգաց իշխանութիւնը և հաւատարմութեան երդում կուտան, կրնան շարունակել իրենց պաշտօնը։ Այս կարգադրութեան դէմ բողոքեցին քուպացիք. «Երեք տարիէ վեր այդ պաշտօնեաներու անիրաւութեանց դէմ կը կռուինք մենք, ըսին քուպացիք, հիմա որ պիտի ազատէինք՝ նոյն լուծը պիտի ծանրանայ մեր վզին»։ Բարեբախտաբար, սպանիացիք չուզեցին շարունակել իրենց պաշտօնը։ Քուպացիներ կը յաջողէն հրաժարողներուն։ Ցայտնի է, սակայն, թէ Սանթ-Եագոյի մէջ նոր կառավարութիւն հաստատելը մեծ խոչընդոտներու կը հանդիպի. անվարժ, անուս ժողովուրդ մ'է այս, որ միապետական կարգերու վարժված է։ Սանթ-Եագոյի դրաւումէն ասդին, շատ քուպացիներ Ամերիկայէն տուն կը դառնան, քաղաքը սկսեր է շինվել, մշակութիւնները վերսկսեր են։ Ամերիկացիք պարծանք կըսեն, թէ մեր բանակին ետեւէն խաղաղութիւն և յաջողութիւն կերթան։ Մեծ թիւով ամերիկացի մեքենագէտներ, արհեստաւորներ, վաճառականներ ալ կերթան, վաճառականական նաւեր սկսան երթևեկել։ Քուպան անսպառ գանձեր ունի, թերևս աւելի բանաւոր է կիզիչ արևու տակ, քան հիւսիսային սառերուն մէջ փնտռել բախտը։ Ինչ որ ալ լինի Քուպայի քաղաքական ապագան, իր վաճառականութիւնը և շահը կապված են Միացեալ-Նահանգաց հետ։ Ամերիկեան դրամագլուխը պիտի ասպարէզ գտնէ հոն, անգլիերէնը պիտի յաջողէ սպանիերէնին, ամերիկացի գաղթականներ պիտի ծաղկեցնեն երկիրը, ամերիկեան գաղափարներ տարածեն, և շատ չանցած կղզին դրբախտ մը պիտի դառնայ։ Այն ատեն շատ հաւանական է, որ կղզեցիք իրենց կամքով ուզեն նետվիլ հանրապետութեան գիրկը՝ Հավայեան կղզիներու նման։

Արմէն

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Ամերիկան մամուլն սկսել է մեծ հետաքրքրութեամբ հետևել ռուս-անգլիական ընդհարումներին Չինաստանում։ Վաղուց ժամանակ է —ասում է «Sun» լրագիրը,—որ աշխարհն իմանայ, թէ Անգլիայի հետ միասին Ամերիկան ևս շահեր ունի Չինաստանում և նրա այդ շահերը վտանգի են ենթարկված ոչ միայն Չինաստանի այն մասերում, որ գրաւել են Ռուսաստանը, Ֆրանսիան և Գերմանիան, այլ և Եանցէ-Կեանքի հովտում։

—Կ. Պոլսից հեռագրում են «Temps» լրագրին, որ Բ. Դուռը ներկայացրեց դարձեալ մեծ պետութիւններին մի յիշատակագիր, որով բողոքում է ծովակալների որոշման դէմ՝ թոյլ չը տալ թիւրքաց զօրքին՝ Կրետէ մտնել։

—«Economiste» լրագիրը հաշուել է որ 1865-ից մինչև 1885 թիւը եւրոպական պետութիւնները Բիսմարկի աղդեցութեան տակ ծախսել են 80 միլիոն ֆունտ ստերլինգից աւելի՝ լրացուցիչ սպառազինութեան համար։

—Յուլիսի 26-ին Պարիզում Մօբէրի հրապարակի վրա մի մեծ ցոյց տեղի ունեցաւ։ Այդ հրապարակում գտնվում է Ստեփան Դոլէյի արձանը, որին, իբրև աղանդաւորի և հումանիստի, 1546-ին խարոյկի վրա այրեցին։ Այդ օր «Ֆրանսիական ազատ-մտածողների ընկերութեան» անդամներն անցան արձանի առաջից և պսակներ դրին նրա վրա։ Բայց վրա հասան և այդ ընկերութեան հակառակորդները և իսկոյն թնդացին աղաղակներ. «Կեցցէ Բօշֆօր, կորչի Զօլա, կեցցէ համայնքը, կորչի Բօշֆօր, կեցցէ Զօլա»։ Կռիւը հասաւ բռունցքի և ոստիկանութեան միջամտութիւնը հազիւ կարողացաւ վերջ տալ անկարգութեան։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ԼԵՎԱՇԵՎՕ, 4 օգոստոսի։ Օգոստոսի 3-ին սկսվեց Պետերբուրգի և Ֆինլանդիայի զինուորական շրջանի զօրքերի զօրահանդէսը։ Առաւօտեան 9 ժամին եկան Նոցա Մեծութիւնները։ Զօրահանդէսից յետոյ տեղի ունեցաւ Բարձրագոյն նախաճաշիկ։

Կ. ՊՕԼԻՍ, 4 օգոստոսի։ Ռուսաստանը, պատասխանելով Բ. Դրան վերջին շրջաբերական ծանուցագրին, վճռական կերպով յայտարարեց՝ որ դէմ է Կրետէի թիւրքաց զօրքերը նոր զօրքերով փոխարինելուն։ Այստեղի դեսպանական շրջաններում սպասում են, որ համանման յայտարարութիւն կանեն և միւս երեք գործակից կաբինետները։

ՎԻԵՐՆԻ, 4 օգոստոսի։ Երեկոյեան 9 ժամ և 40 րոպէին զգացվեց երկրաշարժ։ Առաւօտեան, օգոստոսի 3-ին, երկրի ցնցումն եղաւ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՑԱՑՏՆՈՒՄ Է

—

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ. Խնդրում ենք մեր այն բաժանորդներին, որոնց վրա ապառիկներ կան, բարեհաճեն այս օգոստոս ամսվայ ընթացքում վճարել ապառիկները։

Կ. ՊՕԼԻՍ, Գիրուկ. Ձեր առաջարկած հարցի մասին նամակ գրվեց։

ԼՕՆԴՕՆ, Ս. Շ. Շնորհակալութեամբ ստացանք ուղարկած նկարը։

ՆՈՎՈՐՕՍՍԻՅՍԿ, Պետրոս Յարթեմով. Ձեր ուղած գիրքը գրավաճառանոցում չը գտանք։ Կարգադրեցէք ձեր 1 ռուբլին յետ ստանալ։

ԱՍՏՐԱԽԱՆ, Ս. Տէր-Յակոբեանց, Մ. Հայրապետեանց և Ս. Արզումանեանց. Ձեր ուղարկած փողը՝ յօգուտ այրի Ներսիսեանի որբերի ստացանք։ Թշուառ որբերի կողմից յայտնում ենք թէ ձեզ և թէ միւս նուիրատուներին շնորհակալութիւն։

ԹԻՖԼԻՍ, Ս. Խարազեանց. Ձեր հանդանակած 6 ր. 10 կոպէկը կը յանձնենք աղքատ ընտանիքին։ Կարդացէք նախորդ պատասխանը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

—

Մարդատար № 1 գնացքը դուրս է գալիս ԲԱԳՈՒԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ ցերեկվայ 4 ժամին և 5 րոպէին։ Թիֆլիս է հասնում առաւօտեան 8 ժամ 26 րոպէին։ Դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ առաւօտեան 9 ժամ և 10 րոպէին։ Բաթում է հասնում երեկոյեան 8 ժամ և 47 րոպէին։

Մարդատար № 3 գնացքը դուրս է գալիս ԲԱԳՈՒԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ՝ գիշերվայ 12 ժամ 20 րոպէին։ Թիֆլիս է հասնում երեկոյեան 6 ժամ և 33 րոպէին։ Դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ՝ երեկոյեան 7 ժամ 48 րոպէին. Բաթում է հասնում առաւօտեան 8 ժամ 28 րոպէին։

Մարդատար № 2 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ՝ առաւօտեան 8 ժամ 20 րոպէին։ Թիֆլիս է հասնում երեկոյեան 8 ժամ 22 րոպէին։ ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԳՈՒ է դուրս գալիս՝ երեկոյեան 9 ժամ 5 րոպէին։ Բագու է հասնում ցերեկվայ 12 ժամ 59 րոպէին։

Մարդատար № 4 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ երեկոյեան 8 ժամ 35 րոպէին։ Թիֆլիս է հասնում առաւօտեան 9 ժամ 7 րոպէին։ ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԳՈՒ է դուրս գալիս առաւօտեան 10 ժամ 57 րոպէին։ Բաքու է հասնում առաւօտեան 5 ժամ 45 րոպէին։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11½—12 ժ. կանանց հիւանդ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—12—1 ժ. ներքին, և միասեռական հ. ականջի, կոկորդի և քթի հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Վ. Մ. ՄԱԽՎԻԼԱՁԷ—6—7 ժ. ներքին և երեխայոց հ. նեարդային և մորթի հ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—6½—7 ժ.
Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՕ հիւանդանոցումը քիմիական և խոշորագուցական հետազօտութիւններ է անում մէզի, խիտ, արեան, կաթի և այլն։
Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
2—150 Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Լոյս տեսաւ
Գ. ԷԲԵՐՍԻ
ՄԱՐԴԷՄ
(Homo sum)
Վէպ։ Գերմաներէն բնագրից թարգմանեց Ստ. Մալխասեանց
428 երես։ Գինը 1 ռուբլի։ Դիմել՝ Тифлисъ. Армянское Издательское Общество.
(չ. շ.) 6—20

Լոյս տեսաւ
ԼԵՒՈՆ ԽԱՆ-ԱՂԵԱՆԻ
Գիւղատնտեսական գործիքներ եւ մեքենաներ
Բացատրական բառարանով և 250 նկարով։ Հրատարակութիւն Թիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութեան։
ԳԻՆԸ 50 ԿՈՊԷԿ.
Դիմել՝ ТИФЛИСЪ, Общество изданія армянск. книгъ. 33—40

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
ՏԱՄՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։
Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլոլակում, Ալէքսանդր Փրիդոնովի տանը, № 9, Սերգիեվսկայա և Նագօրնայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրի ապէս եղը. Ծովիանոցների բանկային դրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу. (չ. շ.) 16—25

ԲԵՐԹԱ-ՐԻՍ
Քիմիա-կոսմետիկական լաբորատորիա ՐԻՍ-ԳՈՒՄԱՆ
СЪ ДОЗВОЛЕНІЯ МЕДИЦИНСКАГО ДЕПАРТАМЕНТА ПРИВИЛЕГИРОВ. ЛИЛЯ ПОМАДА · FASTA EUGENIE ПОМАДЫ
Berthac Ries
ԿՈՍՄԵՏԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ
Թանկագին ձեր դարձնել սատարելիքներ մեր դարձնել
ԷՕԺԷՆԻԱՑԻ ՊԱՍՏԱ
երեսի մորթը կակղեցնելու համար պօմադ. ոչնչացնում է շուտով երեսի վրա եղած կարմիր բիծերը և մունները. այս միջոցը առաջ է բերում նաև երեսի թարմութիւն և գեղեցկութիւն։ Գինը 1 ր. 60 կ.
Elixir Mélange
Մազերը աճեցնելու և գլխի թեփը ոչնչացնելու հեղուկ։ Գինը 2 ր.
ԷՕԺԷՆԻ ՊՈՒԴՐԱ
սպիտակ, վարդագոյն և Բաչել (թուխ դէմք ունեցողների համար). նա ամուր կերպով պահպանվում է մորթու վրա և բոլորովին անկատելի է աչքի համար, մորթուն տալիս է նոյնպէս խիստ կակղութիւն, առաձգութիւն և քնքշութիւն։ Գինը է 1 ր. 20 կ.—1 ր. 50 կ.
ԷՕԺԷՆԻ ԿԱՐՄԻՐ ՆԵՐԿ
հեղուկ վիճակի մէջ այտերին և ականջներին տալիս է բոլորովին բնական, վարդային գոյն, որ ոչ ցերեկվայ, ոչ ելէքտրական լոյսից չէ փչանում։ Գինը 1 ր. 50 կ.
ՄԻՐՏԱՑԻՆ ԲԱԼԶԱՄ
(պուդրա հեղուկ վիճակի մէջ), տալիս է երեսին, վզին, ձեռքերին քնքոյշ կակղութիւն և մարմարեանման մաքրութիւն։ Նա ոչնչացնում է արևհարքը մունները, և մորթու վրա եղած ամեն մի անհարթութիւն և տգեղութիւն։ Գինը 1 ր. 75 կ.
ՔԻՆԱ-ԳԼԻՑԵՐԻՆԱՑԻՆ
գլխի պօմադ Պէրուանական բալզամով եփած՝ մազեր պնդացնելու, խտացնելու և աճեցնելու համար։ Գինը 2 ր.
ԽՈՒՆԶԱՑԻՆ ՊՕՄԱԴ
նրա գործածութիւնից յետոյ ձեռները ստանում են զարմանալի սպիտակութիւն և ճկութիւն։ Գինը 1 ր. 30 կ.
ՈՒՆԳԱՐԱԿԱՆ ԷՍՍԷՆՑԻԱ
բեղերի համար (Ռիս-Գուման) տալիս է նրանց անմիջապէս հարկաւոր ձևը, ամրացնում է նրանց և նպաստում է նրանց արագ աճման։ Գինը 75 կ.
ՆԵՐԿԵՐ ՄԱԶԵՐԻ ՀԱՄԱՐ
(Ռիս-Գուման), սև, շագանակագոյն և խարտեաշ։ Այդ ներկով ներկված մազերը պահպանում են իրանց գոյնը 6 շաբաթվայ ընթացքում։ Գինը 3 ր.
Ծախվում է բոլոր դեղարարական և կոսմէտիկական խանութներում։ Գլխաւոր պահեստը՝ Բարձրագոյն հաստատված՝ դեղարարական ապրանքների կովկասեան ընկերութեան մէջ Թիֆլիս և Բաքու։ (ռ.) 44—50

Дозволено цензурою, Тифлисъ, 4 Августа 1898 г. Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13